«Գ. Գիորգի Ալէքսէիւիչ Կազաչէնկօի» նախաձեռնութեամբ (հայ երիտասարդներից) պիտի կազմուի քառաձայն, օրինակելի երգեցիկ մի խումբ: Յարգելի երաժիշտ Կազանչէնկօի ղեկավարութեամբ՝ այդ երգեցիկ խումբը հայկական ժողովրդական, Ազգային և եկեղեցական երաժշտական համերգեր պիտի տայ առաջիկայ 1900 թ. Փարիզում տեղի ունենալիք համաշխարհային ցուցահանդիսում: Երգեցիկ խմբի անդամների ընտրութեան, պարապմանց, տեղի և այլ պայմանների մասին մանրամասնաբար կ'յայտնուի ընթերցողներին մի ուրիշ անգամ: Ուստի՝ այս ուրախալի և ամեն մի հայ մարդու խորին ուշադրութեան արժանի լուրը հաղորդելով յարգելի ընթերցող հայ հասարակութեան, յոյս ունիմ, որ ամեն մի հասկացող, բանիմաց և պարտաճանաչ հայ, իւր բարոյական և նիւթական աջակցութիւնը չպիտի խնայի այս գեղեցիկ գործի յաջողութեան գործին:

— Ասոր նման մի ուրիշ լուր մ'ալ կու տայ Անահիտ, թէ Գ. Բիէռ Օպռի արեւելագէտ, յառաջիկայ ձմեռ երից բանախօսութեամբ պիտի ներկայացնէ հայկական երաժշտութիւնը (եկեղեցական և ժողովրդական) Փարիզի նուագասէրներուն: Գ. Եզիազարեանցի ծրագիրն է որ կը սկսի իրագործուիլ: Բանախօսութիւններուն պիտի ընկերանան շարականներու խմբովին երգեցողութիւններ՝ զոր պիտի կատարեն Ս. Ժէռվէի հռչակաւոր երաժշտապետ Գ.՝ Շառլ Պորտի երգիչները, և «սոլօ»ները պիտի երգէ Գ. Եղիազարեանց:

— Նոր հայերէնագէտներ. — Այս վերնագրով քանիցս առիթ ունեցանք խօսելու «Բազմավէպ»ին մէջ, Փարիզի Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանին մէջ հայերէնի հետեւող ֆրանսացի ուսանողաց վրայ: Այսօր ալ կը դնենք, նոյն վարժարանի 1898–1899ի պաշտօնական ցուցակին համեմատ, հայ լեզուի և պատմութեան հետեւող աշակերտաց անցուցած քննութեանց արդիւնքն: Քննութիւնք կատարուած են բերանացի և գրաւոր:

Ա. ՏԱՐԻԷՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Berthe | Faible | Non admis en | 2e | année |
| Couturat | Bien | Admis | » | » |
| Cuvillier-Fleury | Assez-bien | » | » | » |
| Lelorrain | Passable | » | » | » |
| Quentin | Faible | Non admis | » | » |
| Sevin | » | » » | » | » |
| Simon | Passable | Admis | » | » |

Բ. ՏԱՐԻԷՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Bourdonneau | Bien | Admis en | 3e | année |
| Folquet | Passable | » | » | » |
| Hérigny | » | » | » | » |
| Lasson | Assez-bien | » | » | » |
| Wallace | » | » | » | » |

Գ. ՏԱՐԻԷՆ

| | | |
|---|---|---|
| Aubry | Très-bien | Proposé pour le diplô-(me. |
| Feillet Pilatrie | Bien | » » |
| de Latude | Assez-bien | Ajourné » » |

Ինչպէս կը տեսնուի այս պաշտօնական ցուցակէն, երկու վկայեալ հայերէնագէտներ եւս աւելցան մեր աղքատիկ գրականութեան մշակման և անոր զարգացման նպաստող: Իսկ ասոր հակառակ՝ երկու հատ մերժուած են երկրորդ դասարանն ընդունուելու համար: Ընթերցողք կը յիշեն անշուշտ, թէ այս երկու յետամնաց աշակերտներէն մին՝ Berthe անցեալ տարի ալ չէր կրցած անցունել իր քննութիւնն. ուստի՝ այս երկրորդ տարին է որ կը մերժուի:

— Հայ անուանի նկարիչ Արշակ Ֆեթվաճեանի պատկերահանդէսը Պաթումի մէջ բացուեր է: Նկարչիս վրայ անցեալ տարուան «Բազմավէպ»ին (էջ 501) մէջ խօսած ենք:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆՐԵՄ. Հ. Ս. — Մ. Մամուրեան . . . 493
ՉՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Իմաստունն Խիկար . . 495
ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Այրարատ . . . 497
ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — Ասորական և հայկական տաղաչափութիւն . . . . . 502
ԳՐՕՖ. Ն. ՄԱՐ. — Անի . . . . 506
ՂԱՉԻԿԵԱՆ Հ. Ա. — Մխիթար . . . 509
ՆՐԵՄ. Հ. Ս. — Հանք և իրենց ստուգաբանութիւնը . . . . . . 511
ԱՃԱՌԵԱՆ Հ. Յ. — Սուչավայի բարբառ. . 516
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Մագնիսական քուն . . 519
ԲԱՍՄԱՋԵԱՆ Յ. Կ. — Գերեզմ. հանուած ձեռագիր մը . . . . . . 523
Յ. Ս. — Մաղնիա . . . . . . 524
ՏԱՆԴԷ — Դժոխքին տունը. և այլն – թրգմ. ՂԱՉԻԿԵԱՆ Հ. Ա. . . . . . 526

Գրախօսական ակնարկներ

ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Նոր ընթերցարան . . 530
» » — Դժբախտ կին . . . 530
ՌՈՒՍԵԱՆ Հ. Վ. — Ազգային կրթարան–որբանոց . . . . . . 530
Անթել հեռախօսը նաւերու համար . . 531
ՆՐԵՄ. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից – Անահիտ. – Ծաղիկ. – Բիւզանդիոն. – Բիւրակն. – Մշակ. – Նոր դար . . . 532
Քաղաքական ամիս . . . . . 538
Ազգային արձագանգ . . . . . 539

digitised by A.R.A.R.@